ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
21	Ապրանքը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Բաճկոն՝ հանովի ուսադիրներով (տղամարդու), արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 8): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-ԲՇ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%): Բաճկոնը առջևի մասում կոճկվում է կայծակնաճարմանդով, իսկ գոտեմասում՝ 55 սմ լայնքով ու 12-18 սմ երկարությամբ, ներկարված առաձգական ժապավենով: Թիկնամասի, լանջափեշերի կրծքամասով և թևքերի թեզանիքների կտրվածքների միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ (կանտ) (2581 արտիկուլի մահուդե կտորից): Բաճկոնի վրա ներկարված են կայծակնաճարմանդով կոճկվող 2 կողային գրպան, ծոցագրպաններ, որոնցից ձախը կոճկվող է: Բաճկոնի վրա տեղադրված են հանովի ուսադիրների համար նախատեսված 2-ական ամրակներ: Բաճկոնի օձիքը կանգուն է, մշակված է մեկ կտորից: Օձիքը մուգ կարմիր գույնի է՝ 2,5 մմ եզրաշերտով, օձիքի վրա ասեղնագործվում են ոսկեզօծ թելերով կաղնու ճյուղեր: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան բաճկոնի պատրաստումը բաճկոնի գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնի կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության

	վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքի փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկով, պարկի վրա պետք է նշված լինի անվանումը ըստ վերցված անհատական չափսի, պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսը: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
21	Товар изготавливается в соответствии с критериями и образцами (фотообразцами), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Куртка (костюм) со съемными погонами (мужская), для судебных приставов, имеющих звание генерала-майора юстиции (Фотообразец 8). Изготавливается из темно-синей полушерстяной ткани (67% шерсти, 33% полиэстера, плотностью 317 г/м2, допустимое отклонение: +, - 2%), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100 г/м2, допустимое отклонение: +, - 2%). В передней части куртка (костюм) застегивается на застежку-молнию, а в поясничной части - вшитой эластической лентой шириной 55 см и длиной 12-18 см. По спинке, бортам переда в области груди и по местам соединения разрезов манжет рукавов проходит тёмно-красная окантовка (кант) шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). На куртке (костюме) вшиты 2 боковых кармана застегивающихся на застежку-молнию, внутренние карманы, левый из которых застегивается. На куртке (костюме) расположены по 2 зажима предусмотренные для съемных погонов. Воротник куртки (костюма) стоячий, обработан из одной ткани. Воротник тёмно-красного цвета с окантовкой шириной 2,5 мм, на воротнике вышиваются ветви дуба золотистыми нитями. На левом рукаве есть шеврон (Фотообразец 20), а на правом рукаве - флаг РА в соответствии с требованиями, установленными указанным постановлением. До изготовления куртки (костюма) цветовая гамма куртки (костюма) согласуется с Покупателем. При этом, заранее (до шитья куртки (костюма)) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией

	заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товара - в полиэтиленовом прозрачном пакете, на пакете должно быть отмечено наименование, согласно взятому индивидуальному размеру, маркированная, на марке должны быть отмечены наименование, количество, размер товара. Перевозку и разгрузку товара осуществляет Продавец, за счет своих средств, заранее согласовав с Покупателем конкретный адрес поставки.